«Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2025 թվականի -ի N հրամանի

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թ. հունիսի 7-ի N 07-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) արտաքին կապերի և սփյուռքի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է: Վարչությունն անմիջականորեն ենթարկվում է Նախարարության գլխավոր քարտուղարին (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) և հաշվետու է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին (այսուհետ՝ Նախարար) և Գլխավոր քարտուղարին:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Գլխավոր քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ,

ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված նորմատիվ այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:
4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:
5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:
6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչություն:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության նպատակներն են՝

1) Նախարարության և օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետություններում հայկական համայնքների և այլ օտարերկրյա կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը,
2) կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման ապահովումը:

8. Վարչության խնդիրներն են՝

1) կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային համագործակցության զարգացմանը և ընդլայնմանը նպաստելը,
2) կրթության միջազգայնացմանը նպաստելը,
3) մշակութային ժառանգության հանրահռչակմանը նպաստելը,
4) Հանրապետությունից դուրս բնակվող հայերի հայեցի կրթության, նրանց շրջանում հայոց լեզվի պահպանումը, օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացումը.

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝ ըստ բաժինների.

9.1 Միջազգային համագործակցության և սփյուռքի հետ կապերի բաժին՝

1) մշակում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության քաղաքականությունը,
2) ապահովում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացման գործընթացը,
3) Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակա ուղղությունների համաձայն իրականացնում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառների միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումները,
4) մշակում է սփյուռքի կրթական կարիքների բավարարմանն ուղղված զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերը,
5) մշակում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցությանն առնչվող Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի, միջազգային պայմանագրերի, գործնական ծրագրերի և համագործակցության հուշագրերի նախագծերը,
6) ապահովում է կրթության և սպորտի բնագավառներում միջազգային պայմանագրերի, գործնական ծրագրերի և համագործակցության հուշագրերի ստորագրման ու վավերացման ներպետական ընթացակարգերը,
7) համակարգում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման աշխատանքները,
8) կազմակերպում է կրթական, սպորտային և երիտասարդական միջազգային կառույցներին միանալու և ծրագրերում ընդգրկվելու աշխատանքները,
9) մասնակցում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին,

10) մասնակցում է պետական ռազմավարական ծրագրերում՝ կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառների միջազգային համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին,
11) կազմակերպում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջպետական համագործակցության ծրագրերի մշակումը, իրականացումը և գնահատումը,
12) մշակում և համակարգում է սփյուռքի կրթական հաստատություններին տրամադրվող աջակցության, դասավանդողների կարողությունների հզորացման և Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեությանը սփյուռքի մասնակցության ծրագրերը,
13) կազմակերպում է օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջազգային պայմանագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթների գործընթացը,
14) կազմակերպում և համակարգում է օտարերկրյա քաղաքացիների (այդ թվում՝ սփյուռքահայերի) Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության և կացության կարգավիճակի տրամադրման, օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունում ուսանելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փորձաքննության և հաշվառման գործընթացը,
15) մասնակցում է օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում հայերենի, այլ հայագիտական առարկաների, ինչպես նաև հայկական բաղադրիչ ունեցող ուսուցման ծրագրերի ներդրման և ընդլայնման աշխատանքներին,
16) կազմակերպում և համակարգում է Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա դիվանագիտական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ կրթության բնագավառում համագործակցության աշխատանքները,

17) հաշվառում է օտարերկրյա պետություններում սովորող՝ միջպետական համաձայնագրերի շրջանակներում գործուղված, ՀՀ քաղաքացիներին և Հայաստանի Հանրապետությունում սովորող օտարերկրյա քաղաքացիներին,
18) կազմում է տեղեկանքներ կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության գործընթացների կազմակերպման և իրականացման վերաբերյալ, պատրաստում ամփոփ հաշվետվություններ,
19) մասնակցում է կրթության բնագավառում օտարերկրյա պետությունների հետ համագործակցության միջկառավարական հանձնաժողովների աշխատանքներին,
20) իրականացնում է Նախարարության ստորաբաժանումների, Նախարարության ենթակա կազմակերպությունների միջազգային համագործակցության հաշվառում,
21) կազմակերպում է կրթության բնագավառում միջպետական պայմանագրերի դրույթների և Հայաստանի Հանրապետության պարտավորությունների իրականացման գործընթացը,
22) առաջարկություններ է ներկայացնում միջազգային կազմակերպությունների կողմից մշակված կրթության բնագավառում համագործակցության հուշագրերի և ծրագրերի նախագծերի մասին,
23) սահմանված կարգով մասնակցում է կրթության բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի մշակման և քննարկման աշխատանքներին,
24) ապահովում է փոխհամագործակցություն Նախարարության, սփյուռքի կրթական, բարեգործական և եկեղեցական միությունների միջև.
25) համակարգում է համահայկական համաժողովների կազմակերպման և սփյուռքի կրթական հաստատություններին խորհրդակցությունների տրամադրման աշխատանքները,
26) մասնակցում է կրթության և գիտության բնագավառներում սփյուռքահայ գործիչների պետական պարգևների ներկայացման և Նախարարության պարգևների շնորհման աշխատանքներին.

27) ամփոփում է Նախարարության ստորաբաժանումներից ստացված կրթության սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության ծրագրերի իրականացման հաշվետվությունները,
28) իրականացնում է Նախարարության մասնակցությամբ միջազգային համագործակցության շրջանակներում միջոցառումների նախապատրաստական աշխատանքները և վարում դրանց արձանագրումը,
29) իրականացնում է Նախարարության հետ կրթության բնագավառում միջազգային համագործակցության նպատակով Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցով ժամանած պաշտոնյաների և պատվիրակությունների ընդունելությունը,
30) իրականացնում է կրթության բնագավառում միջազգային համագործակցությանն առնչվող Նախարարի, Նախարարի տեղակալների և Գլխավոր քարտուղարի մոտ արտասահմանյան պատվիրակությունների, Հայաստանում դիվանագիտական ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների ղեկավարների և օտարերկրյա պետությունների պաշտոնատար անձանց այցելությունների հետ կապված աշխատանքների կազմակերպման արարողակարգը, դրանց մասին կազմում է արձանագրություններ և պատրաստում տեղեկանքներ,
31) սահմանված կարգով իրականացնում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում միջազգային համագործակցությանն առնչվող Նախարարի, Նախարարի տեղակալների, Գլխավոր քարտուղարի և Նախարարության աշխատակիցների արտասահմանյան պաշտոնական գործուղումների հետ կապված փաստաթղթաշրջանառությունը և վարում է գործուղումների արարողակարգը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ապահովում է Նախարարության աշխատակիցների տեղեկանքների տրամադրումը,
32) սահմանված կարգով աջակցում է կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառներում գործող պետական կազմակերպությունների միջազգային համագործակցությանը, արարողակարգային և հյուպատոսական խնդիրների իրականացմանը՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով

33)իրականացնում է միջազգային պայմանագրերով և իրավական այլ ակտերով սահմանված կրթության, սպորտի և երիտասարդության բնագավառների միջազգային և սփյուռքի հետ համագործակցության ծրագրերի մշակման ու համակարգման հետ կապված այլ գործառույթներ:

9.2 Մշակութային միջազգային համագործակցության բաժին՝

1) Մշակում է մշակութային միջազգային համագործակցությանն առնչվող Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի, միջազգային պայմանագրերի, համագործակցության հուշագրերի նախագծերը,
2) ապահովում է մշակութային միջազգային համագործակցության համաձայնագրերի, պայմանագրերի, հուշագրերի և ծրագրերի ստորագրման ու վավերացման ներպետական ընթացակարգերը,
3) Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակա ուղղությունների համաձայն իրականացնում է մշակութային միջազգային համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումները,
4) համակարգում է մշակույթի ոլորտում միջազգային միջոցառումների անցկացման հետ կապված կազմակերպական և արարողակարգային աշխատանքները,
5) մասնակցում է պետական ռազմավարական ծրագրերում՝ մշակութային միջազգային համագործակցության ծրագրերի մշակման աշխատանքներին,
6) կազմակերպում է մշակույթի ոլորտում միջպետական համագործակցության ծրագրերի մշակումը, իրականացումը և գնահատումը,
7) կազմում է տեղեկանքներ մշակութային միջազգային համագործակցության գործընթացների կազմակերպման և իրականացման վերաբերյալ, պատրաստում ամփոփ հաշվետվություններ,
8) մասնակցում է մշակույթի ոլորտում օտարերկրյա պետությունների հետ համագործակցության միջկառավարական հանձնաժողովների աշխատանքներին,
9) իրականացնում է Նախարարության ենթակա կազմակերպությունների մշակութային միջազգային համագործակցության հաշվառում,

10) կազմակերպում է մշակույթի ոլորտում միջպետական պայմանագրերի դրույթների և Հայաստանի Հանրապետության պարտավորությունների իրականացման գործընթացը,
11) սահմանված կարգով մասնակցում է մշակույթի ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի մշակման և քննարկման աշխատանքներին,
12) առաջարկություններ է ներկայացնում միջազգային կազմակերպությունների կողմից մշակված մշակութային համագործակցության հուշագրերի և ծրագրերի նախագծերի մասին,
13) իրականացնում է Նախարարության մասնակցությամբ մշակութային միջազգային համագործակցության շրջանակներում միջոցառումների նախապատրաստական աշխատանքները և վարում դրանց արձանագրումը,
14) իրականացնում է Նախարարության հետ մշակութային միջազգային համագործակցության նպատակով Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցով ժամանած պաշտոնյաների և պատվիրակությունների ընդունելությունը,
15) իրականացնում է մշակութային միջազգային համագործակցության հարցերին առնչվող Նախարարի, Նախարարի տեղակալների և Գլխավոր քարտուղարի մոտ արտասահմանյան պատվիրակությունների, Հայաստանում դիվանագիտական ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների ղեկավարների և օտարերկրյա պետությունների պաշտոնատար անձանց այցելությունների հետ կապված աշխատանքների կազմակերպման արարողակարգը, դրանց մասին կազմում է արձանագրություններ և պատրաստում տեղեկանքներ,
16) սահմանված կարգով իրականացնում է մշակութային միջազգային համագործակցությանն առնչվող Նախարարի, Նախարարի տեղակալների, Գլխավոր քարտուղարի և Նախարարության աշխատակիցների արտասահմանյան պաշտոնական գործուղումների հետ կապված փաստաթղթաշրջանառությունը, տեղեկանքների տրամադրումը և վարում է գործուղումների արարողակարգը,

17) սահմանված կարգով աջակցում է մշակույթի ոլորտում գործող պետական կազմակերպությունների միջազգային համագործակցությանը, արարողակարգային և հյուպատոսական խնդիրների իրականացմանը՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով
18) նպաստում է հայկական մշակույթի և արվեստի հանրահռչակմանն ու ներկայացմանը օտարերկրյա պետություններում
19) իրականացնում է միջազգային պայմանագրերով և իրավական այլ ակտերով սահմանված մշակութային միջազգային համագործակցության ծրագրերի մշակման և համակարգման հետ կապված այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:
11. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:
12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժնի պետերը:
13. Վարչության պետը, վարչության պետի տեղակալը, բաժինների պետերը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:
14. Վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժնի պետերի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

15. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորներից՝

1) միջազգային համագործակցության և սփյուռքի հետ կապերի բաժին,
2) մշակութային միջազգային համագործակցության բաժին: